ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **« *ՌՖԷԻ-ԳՀԱՊՁԲ -20/2*»**

« *ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ ՊՈԱԿ* »-Ի կարիքների համար՝ «Շարժական լաբորատոր համալիր / շղթաների վեկտորական անալիզատոր» ձեռքբերման նպատակով կազմակերպված « *ՌՖԷԻ-ԳՀԱՊՁԲ -20/2*»_ծածկագրով գնման ընթացակարգի ՌՖԷԻ ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 10.02.2020թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 11.02.2020թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1. **Խնդրում եմ հստակեցնել «ողջամիտ ժամկետը» և** նշել օրերի առավելագույն քանակ, որի ընթացքում պետք է վերացվեն թերությունները կամ փոխարինվի ապրանքը:

Պարզաբանում N 1. Ողջամիտ ժամկետների տևողությունը կսահմանվի փոխադարձ համաձայնությամբ:

Հարցադրում N 2. **Խնդրում եմ հստակեցնել արդյո՞ք հնարավոր է մատակարարման ժամկետը երկարաձգել մեկ անգամ մինչև 30օրացուցային օրով, ինչպես նշված է պայմանագրի նախագծում:**

Պարզաբանում N 2. Այո: Մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ ,մինչև 30 օրացուցային օրով, ինչպես նշված է պայմանագրի նախագծում:

Հարցադրում N 3. **Ո՞ր փուլում է կատարվելու Պատվիրատուի կողմից հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի և Մատակարարի կողմից 1.1 Հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրերի համապատասխանության ստուգումը:**

Պարզաբանում N 3. Առաջին և միակ փուլում:

Հարցադրում N 4. **Խնդրում եմ հստակեցնել, ո՞րն է համարվում պայմանագրի ամբողջական կատարման արդյունքը ընդունվելու օրը (կատարողի կողմից՝ ապրանքի մատակարարման օրը, թե՞ ապրանքի երաշխիքային ժամկետի ավարտի օրը):**

Պարզաբանում N 4. Հանձման-ընդունման արձանագրության ստորագրման օրը:

Հարցադրում N 5. **Խնդրում եմ հստակեցնել, արդյո՞ք տվյալ պայմանագրի շրջանակներում նախատեսված է կանխավճար, թե՞ ոչ, եթե այո՝ խնդրում եմ նշել չափ և ժամկետ:**

Պարզաբանում N 5. Կանխավճարի չափը և ժամկետը ներկայացված են վճարման ժամանակացույցում:

Հարցադրում N 6. Խնդրում եմ հստակեցնել, ՀՀ օրենսդրությամբ սահմանված և պետական ստանդարտի պահանջներից բխող ի՞նչ սերտիֆիկատներ են անհրաժեշտ, ապրանքի որակի համապատասխանությունը հավաստելու համար:

Պարզաբանում N 6. Օրինակ, մեր կարծիքով հնարավոր տարբերակներից է տվյալ համակարգը որպես չափիչ միջոց հավաստող փաստաթուղթի տրամադրումը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել

« *ՌՖԷԻ-ԳՀԱՊՁԲ -20/2*» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ե. Գրիգորյանին:

Հեռախոս՝ 094-84-94-66:

Էլեկտրանային փոստ՝ irphe.procurement@gmail.com:

« *ՌՖԷԻ-ԳՀԱՊՁԲ -20/2*» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը: